

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ, ՀԱՅ ՀԵՐՈՍՈՒՇԻ ԿԱՆԱՅՔ, ԵՊՀ 2016, 781 էջ

Երևանի պետական համալսարանի հրատարակչությամբ լույս է տեսել ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պատմ. գիտ դոկտոր, պրոֆ. Էդիկ Մինասյանի «Հայ հերոսուհի կանայք» ծավալուն մենագրությունը, որը վաստակաշատ պատմաբանի բազմաթիվ և բազմաբովանդակ աշխատություններից մեկն է: Է. Մինասյանի վաստակը բնութագրող մի ուշագրավ վավերագիր է հեղինակի 60-ամյակի կապակցությամբ ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Ա. Միմոնյանի հղած ուղերձը, որում նշվում է, որ նա հեղինակ կամ հեղինակակից է մոտ 3 տասնյակ ուսումնամեթոդական ձեռնարկների ու դասագրքերի, 7 մենագրությունների և 120-ից ավելի գիտական հոդվածների: Սա ոչ թե գրչակից ընկերոջ շոյող խոսքեր են, այլ ճանաչված պատմաբանի և գիտակրթական խոշորագույն հաստատության ղեկավարի պաշտոնական գնահատում, որը կարող է պատիվ բերել ցանկացած ստեղծագործողի: Մինչև քննարկվող աշխատությանը անդրադառնալը թռուցիկ ակնարկով նկատենք, որ հեղինակի հետազոտությունները նվիրված են հայոց պատմության նորագույն շրջանի ամենահրատապ խնդիրներին: Օրինակ՝ 2013 թ. հրատարակված «Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն» (621 էջ) աշխատությունն առաջին ուսումնասիրությունն է Հայաստանի վերջին քառորդ դարի պատմության բազմաշերտ ու բազմաբովանդակ իրադարձությունների: Ի դեպ, բոլոր ժամանակների հասարակագետների ու պատմաբանների համար ամենադժվարն ու պատասխանատուն, ընթացող իրադարձությունների, երևույթների, նրանց կենտրոնում կանգնած գործիչների լուսաբանման ու գնահատման խնդիրն է եղել: Որպես օրինակ նշենք հայոց պատմության ամենաճանաչված, սիրված ու գնահատված պատմաբան, պրոֆեսոր Լեոյին: Մեծ պատմաբանը իր բազմահատոր աշխատություններում դասական մակարդակով շարադրել է հայոց պատմությունը, սակայն իր ապրած բարդ ու հակասական ժամանակաշրջանին նվիրված աշխատություններում թույլ է տվել էական սխալներ. հիշատակենք «Անցյալից» (1925), «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» (հ. 1-2, 1934-1935) աշխատությունները: Բնականաբար, պրոֆ. Է Մինասյանի առջև ծառայած

բազում խնդիրներից առաջնայինը ընթացող ժամանակահատվածի բարդ ու անավարտ իրադարձությունների անսխալ գնահատումներն են եղել, որը, ի պատիվ հեղինակի հաղթահարել է հաջողությամբ:

Քննարկվող «Հայ հերոսուհի կանայք» մենագրությունը նույնպես արդիական է ու ժամանակակից: Այնտեղ ընդգրկված են ուղիղ 100 տարվա՝ 1894-1994 թթ. չափազանց հախուռն պատմաշրջանում ծավալված պատերազմական գործընթացները և նրանցում մարտնչած հայ կանանց գործունեության լուսաբանումը: Նշված պատմաշրջանում տեղի են ունեցել երեք աշխարհացունց իրողություններ՝ երկու համաշխարհային պատերազմներ և սոցիալիզմի համաշխարհային համակարգի փլուզում, երկբևեռ աշխարհակարգից միաբևեռի անցման գործընթացներ:

Եվ որքան էլ տարօրինակ է, այս բոլոր իրադարձություններում հայ ժողովրդի երկու հատվածների՝ արևելահայերի և արևմտահայության շահերը անմիջականորեն պառակտվել են ուժային տարբեր բևեռների միջև: Օրինակ՝ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում արևելահայությունը հայտնվեց Անտանտի ճամբարում, արևմտահայությունը՝ Եռյակ միության: Գրեթե նույն վիճակը կրկնվեց Երկրորդ համաշխարհայինում. արևմտահայությունը հայտնվեց ֆաշիստական ճամբարում, արևելահայությունը՝ հակաֆաշիստական: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխարհը բաժանվեց երկու ուժային բևեռների սոցիալիզմի համաշխարհային համակարգի և կապիտալիզմի համաշխարհային համակարգերի միջև: Արևմտահայության շահերը հայտնվեցին կապիտալիզմի, արևելահայերինը՝ սոցիալիզմի համակարգում: Այս հակասություններն այնքան արմատական էին, որ ոչ միայն թուրքերին հնարավորություն ընձեռնեցին իրագործելու հայ ժողովրդի ցեղասպանությունը այլև երկար տարիներ հնարավորություն չտվեցին բարձրաձայնելու, դատապարտելու այդ անհուն սպանողը: Ուշագրավ է, որ երկբևեռ աշխարհի փլուզումից հետո ստեղծվեց մի նոր մրցավազք միաբևեռ աշխարհի պահպանման և երկբևեռ կամ բազմաբևեռ աշխարհակարգի ստեղծման համար: Այստեղ նույնպես հայ ժողովրդի շահերը տարրալուծվեցին այս նոր իրավիճակի կերտողների հակամարտությունների ոլորտում: Միայն այն տարբերությամբ, որ նշված 100 տարիների ընթացքում մի պահ միայն ստեղծվեց հայ ժողովրդի համար նպաստավոր պահ, դա 1990 թ.

ապրիլի 3-ին հրապարակված ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու օրենքն էր, որը թույլատրում էր միությունից դուրս եկող հանրապետության տարածքում գտնվող ինքնավար մարզերին իրենց կարգավիճակը տնօրինելու իրավունք էր: Իսկ 1991 թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանի ԽՍՀՄ-ից դուրս գալու հռչակագիրը արցախահայության համար ինքնորոշվելու հնարավորություն տվեց: Ահա թե որքան բարդ ու հակասական ժամանակաշրջանում ծավալված իրադարձություններին է անդրադարձել պրոֆ. Է. Մինասյանը, ահա թե որքան բարդ իրադարձությունների մեջ է փնտրում հայ հերոսուհիներին: Շրջադարձային պատմաշրջանների առանձնահատկություններին համապատասխան հեղինակը իր աշխատությունը բաժանում է երեք գլուխների: Առաջինը կրում է «Հայուհիների հերոսական գործունեությունը 20-րդ դարասկզբի հայոց ազատամարտի տարիներին» խորագիրը և ընդգրկում է 1890-ական թթ. ֆիդայական պայքարի ժամանակներից մինչև 1923 թ. ընկած ինքնապաշտպանական հերոսամարտերի պատմությունը, հատկապես այդ տևական պայքարին հայ կանանց մասնակցության պատմությունը: Այս փուլում հայ կանանց սխրանքները դրսևորվեցին Սասունի, Ջեյթունի, Վանի և տարածաշրջանի այլ վայրերի հերոսամարտերում: Երկրորդ գլուխը կրում է «Հայուհիները Երկրորդ աշխարհամարտի և Հայրենական մեծ պատերազմի տարիներին» խորագիրը: Հեղինակը այստեղ հանգամանորեն անդրադառնում է հայ կանանց գործունեությանը ոչ միայն թիկունքում, արդյունաբերական ձեռնարկություններում, գյուղատնտեսության մեջ, այլև ռազմաճակատի ամենաթեժ մարտերում, պարտիզանական ջոկատներում, ռազմաօդային և հետևակային զորամասերում՝ որպես մարտիկներ, կապավորներ, բժիշկներ և այլն: Հեղինակի հաշվումներով մոտ 10.000 հայուհի է մասնակցել այս պատերազմին: Աշխատության երրորդ գլուխը կրում է «Հայ կանանց մասնակցությունը Արցախյան գոյապայքարին» (1988-1994) խորագիրը: Արցախյան ազատամարտի սկզբնավորման շրջանում ձևավորվեցին 10-ից ավելի զորամասեր, որոնց մեջ ընդգրկվեցին բազմաթիվ հայուհիներ՝ որպես զինվորներ, բժիշկներ, հետախույզներ, որոնցից շատերը իրենց կյանքը զոհաբերեցին հայրենիքին:

Հեղինակը յուրաքանչյուր հերոսուհու գործունեությունը ներկայացնելուց առաջ ուրվագծում է ընթացող ռազմական գործողությունների շրջանակները,

տեղը, դերը հայ ժողովրդի կյանքում, որից հետո ներկայացնում հերոսուհու սխրանքը: Ընդհանրապես ուսումնասիրողները իրենց ասածները համոզիչ դարձնելու համար խնդիրը հասարակականացնում են, ընդհանրացնում, թաքցնում իրենց մասնավոր շահագրգռությունները տվյալ գործչի անձի ու գործի նկատմամբ: Այլ կերպ է վարվում Է. Մինասյանը: Նա հայ հերոսուհուն ներկայացնում է իր հարազատ միջավայրում, օրինակ՝ Աննա Մայրիկի մասին խոսելիս նա ընդգծում է, որ նա Կարո Մասունու մայրն էր: Մարո Ղարաքեշիշյանը Սևքարեցի Սաքոյի կինն էր, Սոսե մայրիկը Աղբյուր Սերոբի կինն էր, Հռիփսիմե Հակոբյանը իր՝ հեղինակի (Է. Մ.) մոր տատն էր: Այսպիսով՝ հերոսուհին անմիջապես կապվում է ոչ միայն իր հարազատին, այլև ընթերցողին, դառնում յուրային, կրկնակի սիրելի, հերոսուհին կապվում է գործող ջոկատի, քաղաքական ու ռազմական գործչի, կուսակցության գաղափարի հետ, քաղաքականացվում, գաղափարականացվում: Այսինքն՝ համաշխարհային այս բարդ իրադարձությունների կիզակետում հայտնված հայ ժողովրդի տղամարդը, զինվորը, գործիչը, հողագործը չի կարող մտածել և գործել այլ կերպ, իսկ նրա մայրը, կինը, քույրը, աղջիկը՝ մի այլ կերպ. դա միասնական ազգի բոլոր խավերի ընդհանուր ծրագիրն ու նպատակն է: Տարբերությունն այն է, որ մեր պատմագրությունը գերազանցապես «տղամարդակենտրոն» ուղղվածություն է ունեցել, հիմնականում տղամարդն է ներկայացվել, գնահատվել, քան կինը, հատկապես հետախույզ, զինվոր, կապավոր, բժշկուհի հերոսուհի կինը: Ահա թե հայ պատմագրության որքան բաց մնացած և որքան կարևորագույն հոգեզմայլ հիմնախնդիրների է անդրադարձել պրոֆեսոր Էդիկ Մինասյանը:

Փիլիսոփայական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր Հենգել Մանուչարյան